ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/466/2025-2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **15 հունվարի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի հունվարի 15-ին քննելով Արմավիր մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մանվելի Գրիգորյանի ընտանիքի անդամ Մանվել Արտակի Պողոսյանի 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/466/2025-2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Ի.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ Արմավիր մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մանվելի Գրիգորյանի ընտանիքի անդամ Մանվել Պողոսյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 15-ին թիվ 01/3240/83-2025 գրությամբ Մանվել Պողոսյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Մանվել Պողոսյանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո 31-րդ օրը՝ ժամը 16:00-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն:

Նշված ծանուցումը Մամվել Արտակի Պողոսյանը ստացել է 2025 թվականի օգոստոսի 23-ին (հիմք՝ [redacted] փոստային առաքանին), սակայն ծանուցումը ստանալուց հետո՝30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագիրը չի ներկայացրել:

1.3 2025 թվականի սեպտեմբերի 24-ին պատշաճ ծանուցված Մանվել Պողոսյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 282/25 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 24-ին որոշում է ընդունվել ՎԻՎ/466/2025 գործի վարույթի ժամկետը մինչև 2025 թվականի նոյեմբերի 24-ը երկարաձգելու մասին և 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 01/4392-2025 գրությամբ Մանվել Պողոսյանին ծանուցում է ուղարկվել ներկայանալու 2025 թվականի նոյեմբերիի 24-ին՝ ժամը 16:00-ին, վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվելիք գործի քննությանը մասանակցելու համար, իսկ ներկայանալու անհնարինության դեպքում ծանուցումը ստանալուց հետո այդ մասին տեղեկացնել գրավոր՝ նամակ ուղարկելով info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Միևնույն ժամանակ, 2025 թվականի նոյեմբերի 13-ին թիվ 01/4397-2025 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին՝ խնդրելով իրականացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող

գործողություններ պարզելու Մանվել Պողոսյանի և Նաիրա Գրիգորյանի 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր համատեղ բնակվելու հանգամանքը:

1.5 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի նոյեմբերի 24-ին որոշում է ընդունվել ՎԻՎ/466/2025/1 որոշումը՝ գործի վարույթը կասեցնելու մասին և 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 01/4565-2025 գրությամբ գործի քննության օր է նշանակվել 2025 թվականի դեկտեմբերի 19-ը ժամը՝ 15:30-ն:

1.6 2025 թվականի դեկտեմբերի 19-ին Մանվել Պողոսյանը միջնորդությամբ դիմել է Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու խնդրանքով և 2025 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 01/4839-2025 գրությամբ միջնորդությունը բավարարվել, գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2026 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 15:00-ին:

1.7 2025 թվականի դեկտեմբերի 19-ին Հանձնաժողովը ստացել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 9103-2025 գրությունը՝ ի պատասխան Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 13-ին թիվ 01/4397-2025 գրության:

1.8 Գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Մանվել Պողոսյանի (հիմք՝ [redacted] փոստային առաքանին) բացակայությամբ 2026 թվականի հունվարի 15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Մանվել Պողոսյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/466/2025-2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ Մանվել Արտակի Պողոսյանը ծնվել է 2003 թվականի ապրիլի

1-ին և ըստ բնակչության պետական ռեգիստրի տվյալների՝ գրանցված է [redacted] հասցեում:

3.2 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 9103-2025 գրությամբ Հանձնաժողովին հայտնվել է, որ «Մանվել Պողոսյանի և Նաիրա Գրիգորյանի 2023 թվականի ընթացքում 183 օր և ավելի համատեղ բնակվելու վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ են ստացվել, որ Մանվել Պողոսյանը պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվել է 2023 թվականի հունիսի 24-ին, որից հետո՝ հունիսի 26-ին, հաշվառվել է Նաիրա Գրիգորյանի բնակության հասցեում՝ [redacted] տանը: Պարզվել է նաև, որ Մանվել Պողոսյանը 2023 թվականի օգոստոսի 21-ին Նաիրա Գրիգորյան հետ միասին մեկնել է ՀՀ-ից և վերադարձել օգոստոսի 28-ին»:

3.3 Արմավիր մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Մանվելի Գրիգորյանի ընտանիքի անդամ Մանվել Պողոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ որպես հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ, պարտավոր է ներկայացնել Հայտարարագիր:

3.4 Մանվել Պողոսյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Գործի քննության օրվա դրությամբ Մանվել Պողոսյանի Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական

պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ **գույքի, եկամուտների և ծախսերի** վերաբերյալ տվյալներ:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի **հայտարարագրում լրացնում են իրենց** գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար**:**

4.4 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում Մանվել Պողոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամ կրել է 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն:

Ընդ որում, Մանվել Պողոսյանը մինչև գործի քննությունը ներկայացրել է Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 8-րդ մասերով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մանվել Արտակի Պողոսյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/466/2025-2026 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանվել Արտակի Պողոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ